«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (Պ-487-25.02.2020-ՄԻ-011/0) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ-ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 5-րդ կետով, որի համաձայն՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք իրենց ազգային, կրոնական տոները կամ պատմական տարեթվերը նշելու համար՝ ոչ ավելի, քան տարեկան չորս օր չվճարվող արձակուրդի իրավունք կունենան:

Նախագծի վերաբերյալ հարկ ենք համարում հայտնել հետևյալը.

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասում նախագծով լրացվող 5-րդ կետի ձևակերպումից առաջարկում ենք հանել «ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ իրենց» բառերը, որպեսզի նախատեսվող կարգավորումը չտարածվի միայն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց վրա՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կարող են լինել այլ կրոնի հետևորդներ, որոնց մեծամասնությունը հնարավոր է չհանդիսանա Հայաստանում ազգային փոքրամասնության ներկայացուցիչ (օր.՝ հինդուիզմ, բուդդայականություն և այլն):

2. Գտնում ենք, որ անհրաժեշտ է կիրառել ոչ թե «պատմական տարեթվերը», այլ «հիշատակի օրեր» ձևակերպումը՝ հաշվի առնելով, որ նման հասկացություն սահմանված չէ, և տվյալ եզրույթը բավականին ընդգրկուն է այն առումով, որ որևէ ազգի պատմության մեջ տեղի ունեցած ցանկացած իրադարձություն ինքնին պատմական տարեթիվ կարող է համարվել: Առաջարկում ենք դիտարկել «պատմական տարեթվեր» բառերը «հիշատակի օրեր» եզրով փոխարինելու տարբերակը:

3. Նախագծի 1-ին հոդվածով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող 5-րդ կետում առաջարկում ենք լրացնել հետևյալ նախադասությունը.

«Սույն կետով նախատեսված արձակուրդի տրամադրման համար գործատուն կարող է գրավոր պահանջել աշխատողից գրավոր հիմնավորում:»:

4. Միաժամանակ նախագիծն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով նախատեսված օրենսդրական տեխնիկայի պահանջներին: Մասնավորապես՝

1) առաջին էջի վերևի աջ անկյունում լրացնել «ՆԱԽԱԳԻԾ» բառը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջը.

2) նախագծով առաջարկվող կարգավորումն անհրաժեշտ է շարադրել հերթական համար ունեցող հոդվածի տեսքով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջները.

3) նախագծի 1-ին հոդվածում «Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 9-ի» բառերից հետո նշված «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ և 18-րդ հոդվածի 3-րդ մասերը.

4) նախագծի 1-ին հոդվածում «1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ կետով՝» ձևակերպումն առաջարկում ենք փոխարինել «1-ին մասում լրացնել նոր 5-րդ կետ.» ձևակերպումով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը.

5) նախագծի 2-րդ հոդվածում «հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը» ձևակերպումն առաջարկում ենք փոխարինել «հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը» ձևակերպումով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածը: